




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա.ԿՍԱԿԱՐՍԿԱՅԱ.

Մ Ո Ւ Ր Ճ Ի Կ Ն Ո Ւ

Մ
Ա
Ն
Գ
Ա
Ն
Ի
Կ
Ն



891.715

Ա-41

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՅՄԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1925

91.715

2-41

891.715

Այ 2-41

6 NOV 2011

EXOS 837 27

ԱՎՍԱԳԱՐՍԿԱՅԱ

Մ Ո Ւ Ր Ճ Ի Կ Ն Ո Ւ



Մ
Ա
Ն
Գ
Ա
Ն
Ի
Կ
Ր

Փոխագրեց [redacted]

Պետական նրատարակչություն

Յերեվան—1925

- 5 FEB 2013

2532



№ 237

Գրադրամար № 230 ր.

Տիրաւ 5000

Պատճառի առաջին սպարան վաղաքապատու

ՄՈՒՐՃԻԿՆ ՈՒ ՄԱՆԳԱՂԻԿԸ

(ՆՈՐ ՀԵՔՅԱԹ)

Հեռավոր մի հարուստ յերկրում մի փոքրիկ, աղքատ տղա յեր ապրում։ Տարօրինակ է, այնպես չէ... Հարուստ յերկիր, աղքատ տղա... Այո, աշխարհի բան է, շատ է պատահում։

Այս յերկրի իշխանը շատ քիչ էր հոգում փոքրիկ ու անտուն յերեխաների մասին։ Իսկ ինքը իշխանը շատ յերեխաներ ուներ, վորոնց սիրում ու յերես էր տալիս և նրանց վոչ մի խոսքը գետին չէր գցում։ Նրանք ապրում էին գեղեցիկ պալատում։ Նրանց շքեղ շորեր էին հագնում ու կուշտ ուտացնում։ Շատ ծառաներ էին նրանց սպասավորում, և պալատականների շքախումբը զվարճացնում էր նրանց, չլինի թե հանկարծ իշխանի յերեխաները տխրեն։ Պալատը շրջապատված էր գեղեցիկ պարտեզով, իսկ պուրակի մեջտեղը մի լիճ կար՝ սպիտակ կարասներով ու փոքրիկ սիրուն մակույկներով։ Այստեղ ու այնտեղ կույտ-կույտ թափթրված էին թանգ ու հետաքրքիր խաղալիքներ։ Բայց յերբ փոքրիկ աղքատ մանուկը փորձում էր մոտենալ պուրակի ցահկապատերին, պահակները վռնգում էին նրան ու չէին թողնում, վոր գոնե հեռվից նայի։ — Կորիր այստեղից, — գոռում էին նրանք։ — քո չուլու փալասի տեղը չի այստեղ... Բայց մի թե տղան մեղավոր էր, վոր կեղտոտ էր ու զզգզված շորերով։

Ախր մեկը չկար, վոր նրան խնամեր, լողացներ, հագուստը կարկատեր: Չէ՞ վոր շորը պատառոտվում ե, կեղտոտվում, յերբ մաքուր անկողնում չես քնում, այլ պատերի տակ, չոր գետնի վրա, անձրևի ու քամու տակ: Այդ եր պատճառը, վոր տղան կեղտոտ եր ու պատառոտված հագուստներով, և չկար մեկը, վոր փսոսար նրան:

Բայց կար ժամանակ, յերբ փոքրիկ տղան այսպես չեր ապրում: Ճիշտ ե, հարուստ չեր, բայց ունեւր իր հարազատ անկյունը: Ծնողները դեռ վողջ եյին: Հոգում եյին իրենց վորդու մասին: Նա տաքուկ, փափուկ անկողնում եր քուն մտնում, իր մոր քնքուշ յերգերով, վոր ջերմացնում եր նրա սրտիկը: Հայրը հասարակ բանփոր եր, ուժեղ, առույգ ու առողջ մի տղամարդ: Նա իր գործը սիրում եր և այնպիսի հաճույքով եր աշխատում, վոր նրա մուրճի հարվածները բոլորին ժպիտ եյին պատճառում: Հենց այդպես ել անվանում եյին նրան՝ «Մուրճ»:

Այդպես ել կանչում եյին հաճախ. «Ե՛յ, Մուրճ հորեղբայր, ինչ խիստ ես թափահա-
րում»: Իսկ նա պա-
տասխանում եր. «Այո, թափ տալով պետք ե
վորդուս կոշիկների
փողը հանեմ»: Յեւ
փողը հանում եր՝ կոշկի
յել, շապկի յել, վարտի-



կի յել: Ո՞վ կհամարձակվեր այն ժամանակ տղային կեղ-
տոտ ու գլխոված կանչել: Հորեղբայր Մուրճը շատ եր
սիրում իր տղային: Յեւ նրան Մուրճիկ անունը տվեց:
«Դե, — ասում եր, — յեթե յես Մուրճ եմ, դու յել, իհարկե,
Մուրճիկ ես... Հորդդ ճամպովը գնա»: Յեւ իր ձեռքով

վորդու համար փոքր մուրճիկ շինեց: Տղան այնքան
սիրեց իր մուրճը, վոր ձեռքից ցած չեր դնում ու
աշխատում եր նմանել հորը, վոր այնքան վարժ եր
հարվածում մուրճով: Շատ հետաքրքիր եյին հորեղբայր
Մուրճի յերգերը: Նա այնպես եր յերգում, վոր բոլորը
գործերը թողնում ու լսում եյին, չլինի թե նրա յեր-
գից մի բառ բաց թողնեն: Ու նրա յերգերն այն չեյին,
ինչ բոլորն եյին յերգում. ուրիշ յերգեր եյին, վոր ինքն
եր հորինում: Իր յերգերում նա պատմում եր խեղճերի
դառն ճակատագրի ու տանջանքների, հարուստների և
ուժեղների անարգարության մասին: Ամենից շատ նա
յերգում եր յերկու հզոր յեղբայրների՝ Մուրճի ու Ման-
գաղի մասին: Կոչ եր անում նրանց՝ միացած կռվել
բռնակալների դեմ: Նա յերգում եր մարդկանց յեղ-
բայրության ու գալիք պայծառ որերի մասին: Ու այդ
յերգերից բոցավառվում եր թշվառների սիրտը, հույսի
շողեր եյին ցուլում նրանց տանջված հոգիներում: Իսկ
յերբ այդ յերգը պատահաբար անցնող հարուստներից
մեկին եր հասնում, նա զայրույթով սեղմում եր
բուռնցքները, ու նրան վախն ու սարսափն եր տիրում:
Իր թանգագին մուշտակի ոճիքում գլուխը թաղած՝ նա
շտապում եր անցնել ու չլսել այդ յերգը: Այդ յերգերը,
սակայն, հետզհետե տարածվեցին: Հետզհետե ավելի ու
ավելի եյին խոռվում նրանք ուժեղների ու հարուստ-
ներին, վորոնք ավելի վրիժառու եյին դառնում: Խեղ-
ճերի կյանքը հետզհետե ավելի յեր դժվարանում. նրանք
խեղդվում եյին ուժից վեր աշխատանքներից ու անար-
գարությունից: Ամենաթեթև բողոքի համար նրանց
հանցագործի անունն եյին տալիս ու բանտերն եյին
շարտում: Մարդիկ մոռացան յերգելը, ծիծաղելը,
բարձրաձայն խոսելն անսովոր դարձավ: Վախվախելով
իրենց շուրջն եյին նայում ու կամացուկ փսփսում:
Իսկ հենց նույն այդ ժամանակ հարուստների պալատ-
ներում ու ապարանքներում թնդում եր յերաժշտու-

թյունը, ու կարծես աղմկալի խնջույքներով աշխատում էին խլացնել այն, ինչի մասին փսփսում էին խեղճերը: Բայց հասավ որը, Հոկտեմբերի պայծառ որը, և Մուրճը յերգեց իր նոր, դեռ չերգված գեղեցիկ յերգը: Նա յերգեց իր յերգն այնպես հաղթական ու հզոր, վոր լսվեց նույնիսկ իշխանի շքեղ պալատում: Այդ յերգը պատմում էր մի նոր, հրաշագեղ, հեռավոր յերկրի ծննդյան մասին, ուր խեղճերը հաղթել են հարուստներին ու թոթափել դարավոր անարդարությունը:

Այնտեղ չկան իշխաններ ու սարուկներ:

Այնտեղ մարդիկ ազատ են, ինչպես իրենց յերգերը:

Այնտեղ շքեղ գոյականներում ապրում են վոչ թե հարուստներն ու յերևելիները, այլ փոքրիկ ուրախ յերեսները: Մեծերի ամբողջ հոգսը, վողջ սերը նրանց է պատկանում: Ազատության ու յեղբայրության պայծառ արևը վառվում է հրաշագեղ յերկրի գլխին ու իր փոսկի շողերն է ուղարկում ամբողջ աշխարհի հալածվածներին, տանջվածներին, ճնշվածներին:

Հանգիստավոր ու հզոր յերգեց Մուրճն իր յերգը:

Նա ուղում էր, վոր բոլոր հալածվածները լսեն այդ յերգը:

Ու նրանք լսեցին: Մոտիկ ազատության վառ հուսով բաբախեցին նրանց սրտերը և հրաշագեղ յերկրի ուժեղ կոչին ցնծությամբ արձագանգեցին:

Բայց այս գեղեցիկ յերգը Մուրճի վերջին յերգը յեղավ: Հասավ իշխանի ականջին այդ յերգը: Բարկացավ, կատաղեց իշխանն ու հրամայեց պատժել համարձակ յերգողին: Յե՛վ ահա խուլ գիշերին, յերբ որվա ծանր աշխատանքից հետո խոր քուն էր մտել բանվորը, նրա աղբատիկ սենյակը լցվեց իշխանի ժանդարմների խմբով: Նրանք զարթեցրին Մուրճին ու հայտնեցին նրան իշխանի հրամանը: Կինը, լսելով այդ, ընկավ գետին՝ մեռածի պես: Բայց ինքը Մուրճը շատ հանգիստ լսեց

այդ սոսկալի բոթը: Նա խնամքով գրկեց իր կնոջը, պառկեցրեց անկողնի վրա ու խնդրեց թույլ տալ մնաս բարով ասելու իր վորդուն: Նրան թույլ տվին:

Մուրճը պինդ գրկեց իր քնած վորդուն: Տղան բացեց աչքերն ու շվարած նայեց ոտար մարդկանց: Հայրը շնչաց:

«Մնաս բարով, իմ Մուրճիկ, Դու մենակ ես մնում աշխարհում, բայց մի ընկճվիր հոգով: Գնա հրաշագեղ աշխարհը և այնտեղ նոր ու յերջանիկ կյանքով կապրես: Դժվար է այդ ճանապարհը, հեռու յե ու փշոտ, բայց դու լավ անուն ես կրում, և այդ անունը կփրկի քեզ: Վերցրո՛ւ քեզ հետ քո մուրճիկը, նա քեզ կփրկի բոլոր շարիքներից»:

— Իսկ ի՞նչպես գտնեմ յես այդ ճանապարհը:

«Գնա դեպի Արևելք: Քամին ու արևը քեզ ցույց կտան իսկական ճանապարհը», — ասաց հայրը: — Բայց մենակ չես հասնիլ, մի ուղեկից վերցրո՛ւ:

— Բայց ո՞վ կուղեկցի ինձ, յեթե այդքան դժվար ու սարսափելի յե ճանապարհը, — տխուր վրա բերեց տղան:

«Մի տխրիլ, վորդյակ, հիշի՛ր իմ յերգը անբաժան յեղբայրների—Մուրճի ու Մանգաղի մասին: Գտիր քո յեղբորը՝ Մանգաղին, և նա կանցնի քեզ հետ ամենադժվարին ու ծանր ուղին: Յե՛վ յերբ դուք միասին լինեք, կկարողանաք հաղթահարել ամենադժվար արգելքներն անգամ»:

— Իսկ ի՞նչպես ճանաչենք այդ հրաշագեղ յերկիրը, — հարցրեց Մուրճիկը:

Մուրճը պատասխանեց.

«Յերբ դուք կտեսնեք խաղաղ աշխատանքի անունով բարձրացրած մուրճերի անտառն ու պսպղուն մանգաղների շարժվող ծովը, իմացեք, վոր ճանապարհի վերջն է»:

— Իսկ ի՞նչպես կհայտնեմ քեզ մեր հաղթանակի մասին, սիրելի հայրիկ, — հարցրեց Մուրճիկը, դեռ գլխի

չընկնելով, վոր հայրն ընդմիջաւ հրաժեշտ ե տալիս իրեն։

«Դուք կխնդրեք արեւին ու քամուն, վոր իմ գերեզմանին հասցնեն ձեր հաղթանակի ուրախ յուրը», — ասաց Մուրճը և վերջին անգամ վորդուն պինդ սեղմեց իր կրծքին։ Աղի արցունքներով լաց յեղավ մանուկը, հասկանալով դառն ճշմարտութիւնը։

— «Յես պատրաստ եմ», — ասաց Մուրճը, դառնալով ժանդարմներին։

Յեմ նրանք տարան Մուրճին։ Առաւոտը նրա մահապատիժն էր։ Կինը, ուշքի չգալով, մեռավ նույն օրը։ Սիրտը չդիմացավ այդ վշտին, նա շուգեց ապրել իր Մուրճի մահից հետո։ Յեմ մեն-մենակ մնաց Մուրճիկն աշխարհիս յերեսին։ Վերցրեց նա իր մուրճը, կոխեց գոտի արանքը և գնաց քաղաքը թափառելու, վորդոմութիւն խնդրելու և հարուստների սեղանի թափթփուկներն ուտելու։

Նա պառկում էր մերկ գետնին և իր ցնցոտիների մեջ դողում էր ցրտից։ Բայց ամենից ծանրը մենակութիւնն էր։ Բոլորին ոտար, ով էր հետաքրքրվում փոքրիկ, քաղցած տղայի վիճակով։ Յեմ մտածեց Մուրճիկը. «Պետք է շուտով գտնեմ յեղբորս. յեթե յես յեղբայր ունենամ, հեշտ կլինի ապրելը»։ Յեմ սկսեց փնտռել։ Նրան շատ ելին դուր գալիս շքեղ հագնված գեղեցիկ մանուկները, վորոնք զբոսնում ելին այգիներում ու ծաղկոցներում. նրանց մեջ էր նա փնտռում իր յեղբորը։ Բայց յերբ նա փորձում էր մոտենալ նրանց, կոպտութեամբ հրում ելին և միշտ միևնույն խոսքերն ելին ասում. «Կորիւր, կեղտոտ ու գլխոված»։ Նրանք չելին հասկանում, թե ինչքան ծանր է փոքրիկի համար այդպիսի խոսքեր լսելը։ Դառնութիւնն ու վիրավորանքն աճում էր



նրա սրտում և հուսահատեցնում էր խեղճ փոքրիկին։

«Ուրեմն ինձ վոչ վոք չի սիրում, և յես վոչ վոքի պետք չեմ», — մտածում էր Մուրճիկը. — «Յերևի յես չեմ գտնիլ մի այնպիսի յեղբայր, վորն ինձ հետ անցնի դժվարին ճանապարհը։ Մնում է մենակ գնալ։ Յեմ յեթե յես ճանապարհին մեռնեմ ել, վոչ վոք, միևնույն է, ինձ չի ափսոսալ»։

Յեմ սպասելով արևածագին, նա բարձր ձայնով կանչեց.

«Բամի, արև, լսեցեք».

Մուրճ-մանկիկն է դուրս յեկել —

Շտապում է Արևելք...

Ասաց ու բռնեց ահուելի ճամպեն. շուտով նա դուրս գեկավ խեղճող քաղաքից՝ իր պալատներով։ Նրա առաջ հոտավետ ծաղիկների գորգերով պատած լայնարձակ դաշտերը բացվեցին։ Առաջին անգամն էր նա դուրս գալիս քաղաքից, ու ամեն ինչ նրան հիանալի յերթվում։ Լի կրծքով նա շնչում էր բուրալի օդը և ուրախ յերգում իր հոր յերգերը, — ուրիշ յերգեր չգիտեր նա։ Ու գնում էր դեպի այնտեղ, ուր այդ յերգերն ելին կանչում։ Միայն թե շուտ հասնեք. միայն թե ուժ մնար կովելու։ Յերկար գնաց նա։ Քանի գնում, ենքան դժվարանում էր ճամպեն։ Ծառավը տանջում էր նրան, հոգնած վոտները թուլանում ելին։ Բայց նա գնում էր առանց կանգ առնելու։ Վերջապես ուժից ընկավ, վորոշեց հանգստանալ հացառատ արտերի հովասուն ստվերում։ Մոտենալով իր ընտրած տեղին, գետնի վրա մի քնած տղա տեսավ։ Գյուղացու շորեր էր հագին, պատռտված քաթանի շապիկ-վարտիկով. գլխաբաց էր, գլխարկի չափ առատ, չսանրված մազերով։ Կողքին մանգաղն էր ընկած։ Մուրճիկի սիրտը ուրախ բաբախեց. «Այս ի՞նչ տղա յե», — մտածեց նա. — «Դուք ե հենց սա յե իմ յեղբայրը, վորին այսքան ժամանակ փնտռում եմ։ Ահա մանգաղն ել կողքին»։ Յեմ Մուրճիկը սիրով շոյեց քնած տղայի գլուխը։ Սա

յել աչքերը բացեց ու վախեցած վեր թռավ, իր կողքին ոտար մարդ տեսնելով: «Մի՛ վախենար, Մանգաղիկս, մի՛ վախենար», — քնքշորեն խոսեց Մուրճիկը, — «Մյգպես ե բո անունը, չե՞... Իսկ իմ անունը՝ Մուրճիկ ե: Յես բո յեղբայրն եմ ու վաղուց ե՛ ինչ փրնտ- ուում եմ բեզ»: Նա բռնեց յերեխայի ձեռքը, բայց սա դեռ վախեցած՝ լռում եր: «Այ բեզ բան, դու ինչ վախկոտն ես յեղել, — ասաց Մուրճիկը, — յերևում ե՛ դու յել վորքի որ ես քաշել. պատմիր՝ ո՞վ ես դու և ինչո՞ւ յես մենակ թափառում դաշտերում: Դե, մի վախենար, յես բեզ չեմ նեղացնի, յես ել բեզ նման մի վորք եմ... արի՛ — յեղբայրանանք»: Յեվ Մուրճիկը պինդ սեղմեց նրա ձեռքը, սա յել, քաղցր խոսքեր լսելով, սիրտ առավ: Ել չեր դողում, աչքերը լցվեցին արցունքով, ու լալով պատմում եր իր դառն վիճակը: Գյուղացու զավակ եր, վորք, մորը չեր հիշում: Մի տարի յե՛ հայրը մեռել եր, ու բեռին եր նրան վերցրել իր մոտ, մի հարուստ գյուղացի: Դառն եր տղայի որը հարուստ բարեկամի տանը: Բանեցնում եյին մեծի պես, իսկ կերակրում եյին թափթփուկներով: Դեռ կերածն ել յերեսովն եյին տալիս անամոթները: Հացից շատ ծեծ ու հայհոյանք եր ուտում խեղճ տղան: Քաղցր խոսք չեր լսում վոչ մեկից: Եղպես ել ապրում եր. մեծ տան մեջ, բայց մեն-մենակ: Խեղճի սիրտը չգիմացավ, վորոչեց փախչել իր հարուստ քեռու տանից, գնալ ուր աչքը կկտրի. բարի սիրտ ու քաղցր խոսք փրնտ- ուելու, իրեն արժանի մի յեղբայր գտնելու, վորին մի խոսք ասի ու լսի, վորի հետ վիշտն ու ուրախու- թյունը կիսի: Մուրճիկը հետաքրքրված լսում եր տղային: Նա հասկացավ, վոր հենց սա յե իր իսկական



յեղբայրը: Յերկուսն ել հարուստների ձեռից փախած, յերկուսն ել փաղաքշանքի ու արգարության կարոտ: Դե, ուրեմն նրանց ճամպեն ել մեկ ե: «Լսի՛ր, Ման- գաղիկս, — ասաց Մուրճիկը, — յեկ՝ միասին գնանք հրա- շագեղ յերկիրը: Փորը ու անտուն յերեխերն այնտեղ լավ են ապրում: Այնտեղ նրանց չեն ծեծում ու հա- լածում, կերածն ել յերեսովը չեն տալիս: Այսպես եր յերգում իմ հայրն իր յերգերում, վորոնց յես հավա- տում եմ, — նրանց համար նա իր գլուխը դրավ»:

— Իսկ ի՞նչպես կգտնենք մենք այդ յերկիրը, — հարցրեց Մանգաղիկը:

— Արևելյան կողմն ե. — պատասխանեց Մուրճիկը. — Արևն ու քամին ցույց կտան մեր ճանապարհը: Վերցրո՛ւ բո մանգաղը, յես ել իմ մուրճը, — նրանք մեր գեներերն են դառնալու: Բոլոր արգելքներին մենք կհաղթենք. թե չկարողացանք, կմեռնենք միասին: Համաձայն ես ինձ հետ գալու:

— Այո, համաձայն եմ, — առանց յերկար մտածելու ասաց Մանգաղիկը. ու յերկու նոր յեղբայրները պինդ համբույրվեցին:

«Մինչև մահ միասին», — կանչեց Մուրճիկը: Ու ձեռք-ձեռքի տալով նրանք համարձակ առաջ շարժվե- ցին: Սրտերում ահ չկար, վիշտն ել անցած ճամպին եյին թողել: Յերկար գնացին առանց կանգ առնելու: Ճամպեն՝ բանի գնում՝ դժվարանում եր, ծաղկավետ մարգագետինները վաղուց եյին անցել, սկսվել եյին արևից խանձված, մերկ դաշտերը: Չոր մացառները բերձում եյին նրանց վոտները: Բայց նրանք գնում եյին անվեհեր ու յերգում միասին: Անցան ամայի դաշ- տերը, խոր անտառները, ուր վխտում եյին գազան- ները, բայց նրանք ձեռք-ձեռքի տված, մուրճն ու մանգաղը բարձր բռնած գնում եյին առաջ ու յերգում:

«Մուրճն ու Մանգաղն են գնում.

Արևելք են շտապում.

Մեզ ոգնեցե՛ք՝ տեղ հասնենք —

Յեղբայրներիս շուտ գտնենք»...

Ու յերբ անցան բոլոր արգելքները, հոգնած կանգ առան. զուլալ ջրերը նրանց ծարավը հագեցրին, թարմ սլտուղները կերան-կշտացան ու կանաչների մեջ քաղցր քուն մտան: Յերբ արևը ծագեց, նրանք նոր ուժերով ճամպա ընկան: Քամի յեր ու մառախուղ, դժվար եր ճամպեն, բայց Մուրճն ու Մանգաղը ելի չվհատվեցին և յերգելով առաջ ելին գնում:

Մուրճն ու Մանգաղն են գնում,

Արևելք են շտապում:

Ոգնիր, քամի', տեղ հասնենք,

Յեղբայրներիս շուտ գտնենք...

Յեվ գլուխները յերկինք բարձրացնելով՝ խնդրեցին արևին.


Արև', արև' դու սիրուն,

Կարմիր արև շողողուն,

Խզճա Մուրճ ու Մանգաղին,

Լուսավորիր մեր ուղին...

Քամին հանդարտվեց. մառախուղը ցրվեց և պայծառ ու ջերմ արևը լուսավորեց յերկիրը, տաքացրեց նրանց սառած մարմինները: Յերեխաներն ամեն մի զժվարության պատրաստ՝ առաջ ելին գնում: Մեկ եր հեռվում մի ինչ-վոր մութ բան տեսան ցցված: Մոտեցան, տեսան մի մեծ ապառաժե պատ: Պարսպի վերև բարձրանում եր բանտի աշտարակը, իսկ ներքևը շարքով կանգնած ելին սպիտակ զինվորներ, վորոնք պաշտպանում ելին ամրոցն ամեն կողմից: Կենդանի մարդիկ տեսնելով, յերեխաներն ուրախությունից ճչացին. «Վերջապես ազատվեցինք տանջանքներից. թե վոր այսքան զժվարությունների հանդիպեցինք, գոնե այժմ մարդիկ կոգնեն մեզ մեր յեղբայրների մոտ հասնելու»: Ու վերջին ուժերը հավաքելով, նրանք մոտ վազեցին սպիտակ զինվորներին: Բայց նրանք շատ սխալվեցին. հենց միայն մուրճի ու մանգաղի տեսքը զինվորների մեջ սարսափ ու զայրույթի աղաղակ ա-



առջացրեց, աշխարհի աղմուկ, վոր գաղափարների վռնոցի
յեր նման: Նրանք շարք կանգնեցին և զենքերի շաշյու-
նով ու վռնոցով վրա տվին յերկու փորրիկ ան-
պաշտպան մանուկներին: Նրանց շրջապատեցին և
գերիների նման հարվածներով քշեցին իրենց առաջ-
նորդի մոտ: Առաջնորդը, շքեղ ու սպիտակ զգեստները
հագին, վոր կարծես մի սպիտակ քարե արձան լինեք,
սպասում էր նրանց իր սպիտակ ձիու վրա նստած:
Կարծես թե նրա դեմքն էլ քարից լինեք: Նա բոլորովին
չազդվեց, յերբ տեսավ վիրավոր վոտներով, չորացած
մարմիններից կախ ընկած շորերի ծվեններով տանջված
յերեխաներին: Իր անշարժ հայացքը նա ուղղեց մուր-
ճին ու մանգաղին, վոր բարձր բռնել էին յերեխա-
ները ձեռներին: Դառն ատելությունը բորբոքվեց նրա
մեջ և շուռ գալով՝ նա ատամների արանքից մոմռաց.
«Վաղը լուսաբացին գլխատել յերկուսին ել»: Ձեռով
նշան արավ նա: Պահակները բռնեցին յերեխաներին,
տարան բանտի աշտարակը ու բոլորովին մութը տե-
ղում փակեցին նրանց: Մի կտոր հաց ու մի կաթիլ
ջուր ել չտվին: Քալցա՝ ու հոսահատ՝ վողջ գիշեր
նստեցին նրանք քարե հատակին, աչք չկացրին ու մտա-
ծում էին՝ մի՞թե ես փորձանքից ազատվելու ճար չկա:

Լուսանում էր. նրանք սկսեցին դիտել իրենց բանտը:
Դատարկ ու կլոր մի սենյակ էր, վոր մի փորրիկ պա-
տուհան ուներ դեպի արևելք: Պատուհանը վերեն էր՝
առաստաղին մոտ: Մուրճիկն ուղեց վերջին անգամ
արևին նայել: «Յեղբայր ջան, — ասաց, — կանգնիր պա-
տուհանի տակ, իսկ յես կբարձրանամ բո ուսերին ու
դուրս կնայեմ»: Մանգաղիկը կատարեց նրա ցանկու-
թյունը, և Մուրճիկը բարձրանալով նրա ուսերին՝ դուրս
նայեց պատուհանից: Արևի պայծառ շողերը ծակում
էին նրա աչքերը, բայց յերբ միքիչ անց տեսավ իր
շուրջը, զարմանքից ու հիացմունքից պապանձվեց: Նա
տեսավ այն, ինչ վոր փնտրում էին: Մուրճերի մի

ամբողջ անտառ, փայլող ու շարժվող մանգաղների
ծով, վոր պսպղում էին արևի տակ ու յեռուն աշխա-
տանքում բարձրանում, իջնում էին շարունակ:

Նա հիշեց հոր խոսքերը. ուրեմն իրենց ճանապարհը
վերջացել է: Մի՞թե նրանք մեռնելու յեն այժմ, յերբ
բախտն այդքան մոտ է, յերբ նրանք գտել են իրենց
յեղբայրներին: Վոչ, այդ անկարելի յե: Պետք է մի
ճար մտածել: Տենդոտ արագությամբ պոկեց իր վրա-



յից շապիկը, մանգա-
ղով կտրեց իր թևն
ու շապկի կտորները
ներկեց արյունով. ա-
պա կապեց մուրճի
կոթին ու սկսեց ծա-
ծանել կարմիր դրո-

շակը: Մարդիկ տեսան նրան: Մուրճերի անտառը վո-
րոտաց անեղ ու շարժվեց առաջ իր փորրիկ յեղբայր-
ներին փրկելու: Յեվ բարձր պատը, վոր այնքան ան-
մատչելի յեր թվում, փուլ յեկավ ուժեղ հարվածների
տակ: Վախից ու սարսափից չքացան յերկաթով ու
պողպատով զինված պահակները:

Յերեխաները տեսան հրաշագեղ աշխարհը. նրանք
պատմեցին իրենց գլխովն անցածը. նրանց ձեռների
վրա տարան հրաշագեղ յերկրի մայրաքաղաքը: Նրանց
տեղ տվին շքեղ դղյակում: Ճիշտ էր ասում հոր յերգը.
այդտեղ վոչ թե իշխաններ ելին ապրում, այլ փորրիկ,
ուրախ մանուկները: Յերեխաներն այս յերկրի հույսն
էին ու ապագան, ու նրանց խնամում էին ծաղիկների
պես: Մուրճիկն ու Մանգաղիկն ապրեցին այս բախ-
տավոր յերկրում, ուր այժմ նրանք շատ ու շատ բույրեր
ու յեղբայրներ ունեյին:

Մուրճիկը չմոռացավ իր հոր խնդիրը, բարձրացավ
իր սիրելի յեղբոր հետ դղյակի բարձր աշտարակի վրա,
նրա հետ միասին յերգեց իրենց հնարած նոր յերգը.

Գոհություն քեզ, արև՝ ջան,
 գոհություն քեզ, լուսաշաղ,
 վոր ցույց տվիր մեր ճամպան
 դեպի յերկիրն այն չքնաղ:
 Մուրճ ու Մանգաղ ձեռք-ձեռքի,
 ծով՝ կարիքից հալածված՝
 թողինք յերկիր տանջանքի,
 թռանք դեպի լուսաբաց,
 դեպի արև նոր՝ կյանքի:
 Բռնած ուղին անծանոթ,
 ուղին անծայր և անեղ,
 պայքարեցինք մահվան հետ,
 թռանք յերկիրն հրաշագեղ:
 Պայքարեցինք մենք անդեն,
 սովից տանջված այնքան շատ,
 ու մենք տարանք հաղթություն,
 ցավից փրկված և ազատ:
 Յե՛վ այս յերգը, հուր արև,

տար դու Մուրճի շիրիմին
 ու քո շողեր վոսկեղոծ
 նրա վրա թող սփռին...

Ու կանչեցին նրանք քամուն.

Ջան, այ քամի, լսիր մեզ,— հաղթանակի լուրը մեծ
 Մուրճն ու Մանգաղն են խնդրում. տար, մեր հորը հասցրո՛ւ:

Քամին գուրգուրեց սիրով հեռավոր գերեզմանը.
 արևը շաղ տվեց վրան իր ադամանդյա շողերը. հասցրին
 հաղթական յերգը վաստակած յերգչին:

Կարծես չբացավ նրա վրայից հողի ծանրությունը:
 Գերեզմանի խորքում անհուն ուրախությունից բաբա-
 խեց ազատության յերգիչ Հայր-Մուրճի սիրտը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0392119

2532



ԳԻՆԸ 10 ԿՈՊ.